ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՔ

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՅԱՆ

ԿԵՆՍՈԼՈՐՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՈՈԼՈՐՏ

1.0 Այս հոդվածի հիմնական նպատակն է՝ նկարագրել և ի մի բերել բնագիտական, հասարակաբանական, փիլիսոփայական, լեզվաբանական ու մշակութաբանական աշխատություններում տեղ գտած առաջ քաշված կենսոլորտից մինչև նոոոլորտ հասկացությունները և նկարագրել հետևյալ գծապատկերը՝



Ո՞րն է նպատակն այս գծապատկերի նկարագրության: Այն կարող է դառնալ միջոց՝ բռնապետական և ամբողջատիրական վարչակարգերն ախտորոշելու ու նրանցում եղած մշակութային գործընթացները նկարագրելու համար: Բացի այդ՝ գուցե հայ գրականության հարուստ նյութը նորովի մեկնաբանելու ու վերաիմաստավորելու շարժառիթ:

1.1 Հասկացություն կենսոլորտի ու նոոոլորտի մասին

Առաջին մակարդակը կենսոլորտ է (= «կենսական նյութ»): Այս հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել կենսաբան Լամարկը (1744-1829): Սա երկրագնդի «կանաչ» ոլորտն է, ուր հնարավոր է կյանքի գոյությունը[1]: Ի. Վերնադսկին կենսոլորտ եզրույթն ընդլայնում է իբրև *կենսականի և ոչ կենսականի միասնություն:* Նա ներառում է ոչ միայն կենդանական աշխարհը, այլև երկրագնդի երկրաբանական շերտը՝ իր կենսոլորտի հետ միասին (Նույն տեղում, կետ 4): Ըստ Վերնադսկու՝ կենսոլորտը ներառում է երկրի կեղևի ոլորտը (литосфера), հիդրոլորտը, մթնոլորտը, այսինքն՝ տարածականորեն ներառում է 10 կմ դեպի ընդերք և մինչև 33 կմ երկրագնդից վեր: Կենսոլորտը ուսումնասիրվում է կենսաբանության, բնապահպանության և այլ հարակից գիտությունների կողմից: Բնապահպանությունն ուսումնասիրում է զանազան էկոհամակարգեր, ինչպիսիք են, օրինակ, «գիշատիչ-զոհ», «մակաբույծ-տեր», «մակաբույծ-զոհ» փոխհարաբերությունները, բացի այդ՝ բնապահպանությունն զբաղվում է նաև մարդ-բնություն կապով:

«Եթե կենսաբանությունը (ներառելով նաև կենսոլորտի մասին ուսմունքը), - գրում է Ա. Գորելովը,- ուսումնասիրում է բարձրագույն կարգերի ամբողջականությունները, ապա բնապահպանությունը՝ ամբողջականությունների տարբեր մակարդակները»[2]: Խոսքն այստեղ տարբեր էկոհամակարգերի մասին է: *Աուտոէկոլոգիան* ուսումնասիրում է տեսակ-միջավայր փոխազդեցությունը (պոպուլյացիա, բնակության միջավայր, էկոլոգիական խորշ (ниша)), *սինէկոլոգիան* բույսերի և կենդանիների ընկերակցումը կոնկրետ բնակության միջավայրում (կենսաբիոցենոզ) (Նույն տեղում, էջ 150):

Արդի փուլում հատկապես ՀԼՄ-ների, քաղաքակիրթ աշխարհի ուշադրության կենտրոնում է հասարակություն-շրջակա միջավայր կապը, թե ինչպես է հասարակությունը ազդում կենսոլորտի վրա: Այս փոխհարաբերության ժամանակ խիստ հրատապ են դառնում բնության, տարբեր էկոհամակարգերի նկատմամբ հասարակության կամ հասարակությունների մտածված, ռեֆլեքսիվ մոտեցումները: Այս ամենը հարուցում է նաև բարոյաէթիկական խնդիրներ: Մարդը կենսոլորտի մի մասն է կազմում, ուստի նա բնության հետ փոխհարաբերությունը պիտի կարգավորի խելացի, որպեսզի վնաս չհասցնի իր ժամանակակիցների և հաջորդ սերունդների շրջակա միջավայրին:

Առաջին անգամ **«նոոոլորտ»** հասկացությունը ներմուծեցին ու գիտական շրջանառության մեջ դրեցին Ա. Լերուան, Տեյար դե Շարդենը, իսկ Վերնադսկին զարգացրեց **«նոոոլորտ»** (5) հասկացությունը՝ այդ դիտարկելով իբրև

---

1 Տե՛ս Вернадский, В. И., Несколько слов о ноосфере, пункт 4 // Успехи современной биологии, 1944, N 18, вып. 2, стр. 113-120 / http://lib.ru/FILOSOF/WERNADSKIJ/noos.txt - 29.12.2010

2 Горелов, А. А. Концепции современного естествознания, М., изд. «Владос», 2003, с. 150.

մարդ-բնություն բանական փոխհարաբերության բարձրագույն դրսևորում:

Ըստ Տեյար դե Շարդենի՝ նոոոլորտի կայացումը անցնում է հետևյալ փուլերով՝ գեոգենեզ (մոլեկուլներ) → կենսագենեզ (բջիջներ) → հոգեգենեզ (նյարդային համակարգ = մարդ) → նոոգենեզ (նոոոլորտ) (Նույն տեղում, էջ 201): «Մարդկությունն իր ամբողջության մեջ,- գրում է Վերնադսկին,- դառնում է հզոր երկրաբանական ուժ: Նրա առջև, նրա մտքի և աշխատանքի առջև դրվում է կենսոլորտը վերափոխելու խնդիրը՝ ի շահ իբրև մեկ ամբողջություն ազատ մտածող մարդկության: Այդ նոր կենսոլորտի վիճակը, որին մենք չնկատելով մոտենում ենք, հենց նոոոլորտն է»[1]: Ըստ Վերնադսկու՝ մարդը «երկրաբանական հզոր ուժ» է դառնում իր գիտելիքի, նոր տեխնոլոգիաների միջոցով (տեխնոլորտ). նա եռանդագին մասնակցում է ֆիզիկական, կենսաերկրա-քիմիական գործընթացներին[2]:

«Նոոոլորտ» հասկացության արդիականությունը պայմանավորված է և՛ գիտության զարգացմամբ, և՛ պատմական իրադարձություններով (Երկրորդ համաշխարհային պատերազմ): «Այժմ,- գրում է Վերնադսկին,- մենք չենք կարող հաշվի չնստել այն բանի հետ, որ այժմ վերապրվող պատմական մեծ ողբերգության համատեքստում գնացինք ճիշտ ճանապարհով, որը համապատասխանում է նոոոլորտին»[3]: Ինչպես նկատում ենք, նոոոլորտի գիտակցումը ենթադրում է կենսոլորտի նկատմամբ բարոյաէթիկական մոտեցում, պատասխանատու շահագործում մարդու և հասարակությունների կողմից: Նոոոլորտի ստեղծումն անհրաժեշտություն է, որ մարդու կողմից ստեղծված տեխնոլոգիաները (տեխնոլորտ) կիրառվեն կենսոլորտը խնայողաբար, ռեֆլեքսիվ կառավարելու համար, որպեսզի հնարավորինս չխախտվի կենսոլորտը, էկոհամակարգերը[4]: Մարդու համար կենսոլորտի շահագործման մեկնակետը պիտի լինի հումանիզմը, մարդակենտրոն արժեբանական համակարգը[5], այսինքն՝ պիտի լինի մի ոլորտ, որն ընդգրկի «հասարակության հումանիստական էությունը»: Դ. Լիխաչովն այս ոլորտը անվանում է **հոմոոլորտ** ("не человекосфера, а гомосфера")[6]: Գրականագետ-մշակութաբանը այն բնութագ-

---

1 **Вернадский, В. И.** Несколько слов о ноосфере, пункт 10 // Успехи современной биологии, 1944, N 18, вып. 2, стр. 113-120 / http://lib.ru/FILOSOF/WERNADSKIJ/noos.txt - 29.12.2010

2 Հայտնի է՝ արդի փուլում մարդն արդեն գենի հետ է աշխատում (կլոնավորում և այլն), ինչը հարուցում է նաև կենսաէթիկական խնդիրներ:

3 **Вернадский, В. И.** Несколько слов о ноосфере, пункт 12.

4 Այս խնդիրներով է զբաղվում *սոցիալական բնապահպանությունը*, իսկ մարդ-կենսոլորտ հարաբերության բարոյական խնդիրներով՝ *կենսաէթիկան*:

5 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Адорно, Теодор.** О технике и гуманизме // Философия техники в ФРГ М., 1989. с. 364-371 / http://www.gumer.info/bogoslov_Buks/Philos/adorno/tehgum.php - 01.01.2011

6 Лихачев, Д. С, Гомосфера – термин наших дней: [беседа] // Огонек., 1984, № 36, С. 17–19 / **http://www.lihachev.ru/bibliografiya/by/4547/** - 10.01.2011. Իբրև հոմոոլորտը ձևավորող

ռում է հետևյալ կերպ. «Ոչ թե «նվաճել», այլ միայն զգույշ, հարգալից ու շնորհակալ վերաբերմունք բնությանը՝ ահա սա պետք է լինի բնորոշ մեր օրերի հոմոոլորտի համար»[1]: Ինչպես նկատում ենք, Լիխաչովի անվանած ոլոտը բովանդակային պլանում մոտենում է նոոոլորտին: Բայց այն ունի իմաստային մի նրբերանգ. հոմոոլորտը հարկավոր է, որ **տեխնոլորտի**[2] գործադրումն իրականացվի մարդասիրական արժեքներին համապատասխան, *ուր ակտիվ մասնակցություն ունի մշակույթը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի դուրս գալ կամ խոսել նոոոլորտի մասին:* Այլ կերպ ասած՝ հոմոոլորտը հիմք է պատրաստում նոոոլորտը կառուցելու համար: Վերն ասվածից կարող ենք եզրակացնել, որ հոմոոլորտի ձևավորման համար անհրաժեշտ է մարդկային հզոր ճիգ, բարոյական պատասխանատվություն: Ինչպես հոմոոլորտը, այնպես էլ նոոոլորտը մարդկության բարոյական պատասխանատվության արգասիք է: Պատահական չէ, որ Վերնադսկին նոոոլորտի գիտակցումը կապում է դեմոկրատական արժեքների հետ. «Մենք մտնում ենք նոոոլորտի մեջ: Մենք ապրում ենք դաժան ժամանակներում՝ համաշխարհային պատերազմի քայքայիչ ազդեցության, նոր տարերային երկրաբանական գործընթացների ժամանակաշրջանում: Բայց կարևոր է այն փաստը, որ մեր ժողովրդավարության գաղափարները շարժվում են բնության օրենքներին, երկրաբանական տարերային գործընթացներին համընթաց, ինչը համապատասխանում է նոոոլորտին»[3]: Հատվածից պարզ է, որ մարտնչող տերությունները պետք է հստակ գիտակցեն կենսոլորտի, նոոոլորտի անհրաժեշտության մասին ու չընկնեն

և նոոոլորտին նպաստող տեքստ կարող ենք համարել Դ.Ս. Լիխաչովի ղեկավարությամբ մշակված «Մշակույթի իրավունքի դեկլարացիան» (Лихачев, Д.С. Декларация прав культуры / http://www.lihachev.ru/deklaratsiya/123/ - 16.01.2011, իսկ արձագանքների և նրա հետագա ճակատագրի մասին տե՛ս Запесоцкий, А. С. Д.С.Лихачев — великий русский культуролог: Издательство СПбГУП, СПб., 2006. // http://www.lihachev.ru/deklaratsiya/zapesotsky/ -15.03.2011, Он же, Адвокат российской культуры // Журнал российского права. – 2006. - № 12. – С. 137 – 141 / http://www.lihachev.ru/deklaratsiya/1891/1892/ - 15.03.2011, Путило, Н. В. Важный документ для регулирования отношений в области культуры // Журнал российского права. – 2006. - № 12. – С. 147 – 148 / http://www.lihachev.ru/deklaratsiya/1891/1894/ - 15.03.2011.

1 Лихачев, Д. С, Гомосфера – термин наших дней: [беседа] // Огонек., 1984, № 36, С. 17–19 / http://www.lihachev.ru/bibliografiya/by/4547/ - 10.01.2011.

2 Նկատենք, որ տեխնոլորտի գովքն է արել Մարինետտին իր ֆուտուրիզմի առաջին մանիֆեստում. «Առասպելաբանությունը, միստիկան այդ բոլորը արդեն անցյալում են: Մեր աչքերի առաջ ծնվում է նոր կենտավրոսը՝ մարդը մոտոցիկլի վրա, իսկ արդեն առաջին հրեշտակները դեպի երկինքն են սլանում աէրոպլանի թևերի վրա», «...մեր աշխարհը դարձավ է՛լ ավելի գեղեցիկ. այժմ նրանում առկա է արագությունը» (Маринетти, Ф. Т., Первый манифест футуризма, с. 158,160 // Называть вещи своими именами: Прогр. выступления мастеров запад.- европ. лит. XX века (Сост., предисл., общ. ред Л.Г Андреева), М., изд. «Прогресс», 1986).

3 Вернадский, В. И., Несколько слов о ноосфере, пункт 13.

ծայրահեղ տեխնոկրատիայի մեջ, որի սկզբունքն է՝ «կարող ես, ուրեմն պետք է» (Can-implies ought)[1]: Իսկ ինչ վերաբերում է Վերնադսկու այն պնդմանը, թե մարդկությունը մտել է նոոոլորտի փուլ, ապա գիտնականի այս դատողությունը չի համապատասխանում իրականությանը: Վերնադսկու խոսքերը մինչ օրս էլ մնում են իբրև գալիքի ծրագիր. 8-յակի կամ 20-յակի բանակցությունները մնում են խոսքային մակարդակում, քանի որ դեռևս ուտոպիստական են համաշխարհային կառավարության ծրագիրը[2], գլոբալ տաքացման շուրջ ծավալվող քննարկումները:

Ըստ էության, հոմոոլորտի ու նոոոլորտի չկայացման մասին են գրել նաև Հորքհայմերն և Ադորնոն իրենց «Լուսավորության դիալեկտիկա» (1947 թ.) աշխատության մեջ, որի հիմնադրույթն էր Լուսավորության ժամանակաշրջանից ժառանգված բանականության թագավորության չկայացումը: Ադորնոն և Հորքհայմերը փաստորեն քննադատում և անիրականանալի են համարում նոոոլորտի՝ իբրև բանականության իշխանության ոլորտ *ֆիխտեական ըմբռնումը*:

1.2 Հասկացություն «նշանային ոլորտ» եզրույթի մասին

Առանձնահատուկ կարևոր է մշակույթը վերլուծելու համար նաև Յու. Լոտմանի առաջ քաշած «նշանային ոլորտ» («նշանային տարածք») հասկացությունը: Տեսաբանը, «նշանային տարածք», «նշանային ոլորտ», «նշանակերտման տարածք»[3] ասելով, հասկանում էր.

ա. ոչ թե առանձին լեզուների հանրագումարը, այլ՝ «նրանց գոյության ու աշխատանքի պայմանը» (Նույն տեղում, էջ 250),

բ. «Անտրոհելի աշխատող մեխանիզմը չպետք է համարել առանձին լեզուն՝ իբրև նշանակերտման[4] միավոր, այլ՝ ամբողջ ներհատուկը տվյալ մշակույթի նշանագիտական տարածքը: Վերջինս մենք անվանում ու սահմանում ենք իբրև նշանային ոլորտ» (Նույն տեղում, էջ 251),

---

1 Տեխնիկա-պատասխանատվության կապի մասին տե՛ս Ленк, Ханс. Ответственность в технике, за технику, с помощью техники, с. 372-392// Философия техники в ФРГ (Сост. и предисл. Ц.Р.Арзаканяна и В.Г. Горохова), М., изд. «Прогресс», 1989.

2 Այս մասին տե՛ս Ռուսլան Գրինբերգի հեռուստադասախոսությունը՝ Гринберг, Руслан Семенович. Индивидуальные и общественные интересы в экономической теории (1-ая лекция), 17.11.2010 // http://www.tvkultura.ru/video.html?id=198104&doc_type=TVP&doc_id=99682 - 05.01.2011.

3 «Семиосфера», «семиотическое пространство», «пространство семиозиса». այսպիսի հոմանիշային շարքով է հանդես գալիս «նշանային ոլորտ» հասկացությունը (Лотман, Юрий, Семиосфера. Санкт-Петербург. Искусство-СПБ, 2004, с.250-251):

4 Նշանակերտում (семиозис) ասելով՝ հասկանում ենք ցանկացած «գործընթաց, ուր ինչոր մի բան մեկնաբանվում է իբրև նշան» (Չ. Ու. Մորրիս), «օբյեկտ-նշան-մեկնաբանելի» (Չ. Ս. Պիրս) հարաբերությունները:

գ. «Նշանային ոլորտը և՛ հետևանք է, և՛ մշակույթի զարգացման պայման» (Նույն տեղում, էջ 251),

դ. «նշանային ոլորտի կառուցվածքը ասիմետրիկ է: ...Ասիմետրիկությունը դրսևորվում է նշանային ոլորտի կենտրոն // ծայրամաս, արտաքին մաս ծիրում» (Նույն տեղում, էջ 254),

ե. «...ոչ մի լեզու (այդ թվում բնականը) չի կարող աշխատել, եթե ընկղմված չէ նշանային ոլորտի մեջ», ճիշտ նույն կերպ «ոչ մի նշանային ոլորտ... չի կարող գոյություն ունենալ առանց բնական լեզվի՝ իբրև կազմակերպող առանցք» (Նույն տեղում, էջ 254),

զ. «Մշակույթն իրեն կազմակերպում է որոշակի «տարածություն-ժամանակ» ձևի մեջ և նման կազմվածքից դուրս չի կարող գոյություն ունենալ: Այս կազմվածքն իրացվում է իբրև նշանային ոլորտ և միաժամանակ նրա միջոցով» (Նույն տեղում, էջ 259),

է. «Նշանագիտական համակարգերը գտնվում են անընդհատական շարժման մեջ: Փոփոխականությունը նշանային ոլորտի գոյության օրենքն է: Այն փոփոխվում է ամբողջությամբ և անընդհատ փոխում է իր ներքին կառուցվածքը» (Նույն տեղում, էջ 276):

1.3 Հասկացություն «հասկացութաոլորտի» մասին

Ինչ վերաբերում է **հասկացութաոլորտ** եզրույթին[1], ապա այն ներմուծել է Դ. Լիխաչովը. «Հասկացույթն առաջանում է ոչ թե անմիջապես բառի նշանակությունից, այլ բախման արդյունք է բառարանային իմաստի և մարդու անհատական ու ժողովրդական փորձի միջև»[2]: Սա ինքնին ենթադրում է հասկացույթի և՛ *համաժամանակյա*, և՛ *տարժամանակյա* մեկնաբանություն: Ասվածը բխեցնում ենք Լիխաչովի հետևյալ տողերից. «Հասկացույթներն ի հայտ են գալիս մարդու գիտակցության մեջ ոչ միայն իբրև «ակնարկներ հնարավոր նշանակությունների», «դրանց հանրահաշվային դրսևորում», այլ նաև մարդու՝ նախորդող լեզվական փորձի՝ պոեզիայի, արձակի, գիտության, սոցիալական, պատմության արձագանք»[3]:

Ակադեմիկոս Յու. Ստեպանովը հասկացույթի նկարագրության քիչ այլ մոտեցում է առաջարկում: Վերջինս իր «Հասկացույթ» բառ-հոդվածում առաջարկում է նկարագրել այն բառային, դարձվածային, ասույթային, ասացված-

1 Յու. Ստեպանովն այս ոլորտը անվանում է նաև «հայեցակարգային ոլորտ» («концептуализированная область (сфера)» // Степанов, Ю. С., Константы: Словарь русской культуры. М.: Академический Проект, 2004, С. 44 / http://philologos.narod.ru/concept/stepanov-concept.htm - 15.02.2011

2 Лихачев, Д. С., Концептосфера русского языка // Известия РАН. Серия литературы и языка, Т. 52, 1993, N 1, с. 4.

3 Նույն տեղում, էջ 5:

քային և տեքստային մակարդակներում[1]: Հասկացության այսպիսի մեկնաբանությունը ենթադրում է միայն *տարժամանակյա* մեկնաբանություն[2]:

Հասկացությունները ձևավորվում, հարստանում ու գործառնություն են գտնում յուրաքանչյուր նշանային ոլորտում: «Լեզվի հասկացութաոլորտը, ըստ էության, - գրում է Դ. Լիխաչովը,- ռուս մշակույթի հասկացութաոլորտն է, ...իսկ լեզուն՝ ռուս մշակույթի խտածոն (կոնցենտրատ)»[3]: Ինչպես նկատում ենք, հասկացութաոլորտը գոյանում է հասկացություններից:

1.4 Ոլորտների օգտակարությունը և իմաստավորումը

Եթե վերը ասածները տեղայնացնում են Երրորդ Ռայխի գործունեության վրա, ապա 1933-ից հետո գերմանական նշանային ոլորտում վերաիմաստավորվում են, օրինակ՝ «եղբայրություն», «ընկերություն» (Freundschaft, Kameradschaft, Bund) հասկացությունները վերաիմաստավորվում են և փոխարինվում «Volksgemeinschaft» (Volk (ժողովուրդ) + Gemeinschaft (ընդհանրություն, միասնություն) նշանակիչով, ինչը կարելի է թարգմանել ժողովրդամիասնություն բառով: Ինչպես նկատում ենք, նշանային ոլորտն ավելի լայն է իր բովանդակային պլանով, քան հասկացութաոլորտը: Վերջինս նշանային ոլորտի բաղադրիչ մասն է, «շինանյութը»:

Իսկ ինչ վերաբերում է հասկացութաոլորտին և նշանային ոլորտին, ապա այս եզրույթները և նրանց բովանդակային ծանրաբեռնվածությունը «գործիքներ» են մշակույթը, գրականությունը վերլուծելու համար:

Հետևելով Լոտմանի նախանշած նշանային ոլորտի առանձնահատկություններին՝ կարող ենք ասել, որ գերմանական իրականության մեջ «ծայրամասայինը», հատկապես 1933-ից հետո, գալիս է «կենտրոն»: Այս անցումն իրականացվում է նախորդող մարդասիրական գրքերի այրումով: Հետ են մղում մինչ այդ «կենտրոնում» եղած տեքստերը (մարդասիրական գրականություն և այլ տրամասույթներ), և «կենտրոնում» տեղ են գրավում նացիստական կարևորագույն տեքստերը (Հիտլերի «Իմ պայքարը», Ռոզենբերգի «XX դարի միֆը» // նացիստական գրական տրամասույթ) և նրանցից ծնված ենթատեքստերը[4]:

---

1 Մանրամասն տե՛ս Степанов, Ю. С. Константы: Словарь русской культуры. М.: Академический Проект, 2004, С. 42-83 / http://philologos.narod.ru/concept/stepanov-concept.htm - 15.02.2011)

2 Մեր հետագա հասկացությունների (օր.՝ Արևելք, եղբայրություն և այլն) մեկնաբանությունները հենվելու են Յու. Ստեպանովի մոտեցման վրա, քանի որ գործ ունենք *գրավոր տեքստերի* հետ: Իսկ Լիխաչովինը արդյունավետ է համաժամանակյա կտրվածքում սոցիոլոգիական վերլուծությունների առումով:

3 Лихачев, Д. С. Концептосфера русского языка // Известия РАН. Серия литературы и языка, Т. 52, 1993, N 1, с. 6- 9. / http://feb-web.ru/feb/izvest/1993/01/931-003.htm - 15.02.2011.

4 Նկատենք, որ «Ծայրամասից» «կենտրոն» անցումը 1920-30-ականներին հարթ չի անցել:

Հասկացութաոլորտի գիտակցումը հնարավորություն է տալիս տվյալ նշանային ոլորտում եղած տեքստերի հիման վրա նկարագրել-վերլուծել տվյալ մշակույթի արժեքները, որոնք նկարագրվում են հասկացությունների միջոցով՝ իբրև նշանային ոլորտի, մշակույթի հաստատուն միավորներ:

Իսկ ինչ վերաբերում է նրան, թե հասկացութաոլորտն ու նշանային ոլորտը ինչն են նկարագրում՝ «մե՞նքը», թե՞ «նրանքը»: Այս երկու ոլորտները նկարագրում են «մենքը», բայց հեռանկարային է նաև «նրանքի» ներքաշումը «մենքի» տարածք, այլ խոսքերով ասած՝ «մենք»/«նրանք» հակադրության ծիրում ուսումնասիրողին նման մոտեցումը լայն հորիզոններ է բացում հասկացությունների, տարբեր նշանային ոլորտների՝ մշակույթների համեմատական, տիպաբանական, միջմշակութային վերլուծությունների համար: Ամբողջատիրական վարչակարգերից նացիզմը, փաստորեն, ուզում էր իր սեփական «մենքը» տարածել այլ նշանային ոլորտների վրա («նրանք»), այլ խոսքերով ասած՝ ուզում էր վերացնել մշակույթների երկխոսությունը՝ հաստատելով միայն սեփական արիական նացիստական մշակույթի «մենախոսությունը»:

Վերը ուրվագծված կենսոլորտ-տեխնոլորտ-հոմոոլորտ-նոոոլորտ հասկացությունները ընդհանուր առմամբ չեն դառնում «գործիք» մշակույթը վերլուծելու, նկարագրելու համար, բայց այս ոլորտների գիտակցումը հնարավորություն է տալիս ախտորոշելու, թե ինչպիսին են տվյալ վարչակարգերը, հասարակությունները, ուրիշ խոսքով՝ տվյալ հասարակության մեջ բարոյաէթիկական խնդիրները հասկանալու համար: Արդյոք գիտակցու՞մ են հասարակությունները «մենքի» տեսանկյունից «նրանք»-ի բևեռը: Ունե՞ն *պատասխանատվություն* մարդկության հետագա սերունդների նկատմամբ: Այս առումով խիստ արժեքավոր է Հանս Յոնասի՝ ապագայի բարոյական հրամայականը (իմպերատիվ). «Վարվի՛ր այնպես, որ քո գործողությունների հետևանքները համատեղելի լինեն երկրագնդի վրա հիրավի շարունակական մարդկային կեցությանը»[1]:

Դժվար թե պատերազմներ հրահրող ու մարդաոչնչացման գործարաններ ստեղծած նացիստական քաղաքական էլիտան մտածեր բնության մասին: Պատահական չէ, որ Վերնադսկու նոոոլորտի գաղափարի հարուցումն ի հայտ է գալիս երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Վերնադսկու նոոոլորտի առաջարկը կարելի է մեկնաբանել իբրև մի թաքնված բարոյական պատասխանատվության կոչ՝ ուղղված իր ժամանակի և գալիքի *բռնապետական* ու *ամբողջատիրական* վարչակարգերին: Քանի որ նոոոլորտը համամարդկային հումանիստական արժեքների հիման վրա պետք է կառուցվեր, ապա այս պարագայում նոոոլորտը չի ճանաչում «մենք»// «նրանք» հակադրությունը:

1 Хунинг, Алона. Инженерная деятельность с точки зрения этической и социальной ответственности, с. 406 // Философия техники в ФРГ, М., изд. «Прогресс», 1989.

Այն հիմնված է առանձին նշանային ոլորտների՝ մշակույթների («մենք») հիման վրա, բայց, շնորհիվ հումանիստական արժեքների, ազգային «մենքը» չեզոքացնում է ու ձևավորվում համամարդկային «մենքը»: Այլ խոսքերով՝ առանձին «մենքերից»՝ մշակույթներից պիտի կառուցվի հավաքական «մենքը»: Համամարդկային արժեքներին, հավաքական «մենքին» 1933 թվականից սկսում է սպառնալ, ըստ նացիստական քարոզչության, բոլոր ազգերից վեր գտնվող արիական մշակույթը, արիական արժեբանական համակարգը: Ստացվում է, որ Վերնադսկու կոչը անհիմն չէր, այլ խորապես գիտակցված առաջարկ էր, որ նոոոլորտը՝ հավաքական «մենքը», պիտի հակադրվեր արիական «մենքին»: Հարկ ենք համարում նշելու, որ արիական «մենքը» չեզոքացված է, բայց նոոոլորտին և նշանային ոլորտին սպառնում է գլոբալ տեղեկատվության արդյունքում ձևավորված **ինֆոոլորտի**, «մեդիատարածքի» վտանգը[1]: Ինֆոոլորտը տեղեկատվության, գաղափարների և պատկերների այն տարածքն է, որտեղ մեդիաակտիվիստները մեդիավիրուսների «պրոտեինե պատյաններով» (օր.՝ երաժշտական արտահայտություն, տեսողական պատկեր, գիտական տեսություն, սեքսուալ սկանդալ, փոպ-աստղ և այլն) բուծում են «տեսապուշներ» (видиот), որոնք «ի վիճակի չեն բանական որոշումներ կայացնելու կամ չափազանց պասիվ են որոշումները կյանքում իրագործելու առումով»[2]:

1.5 Մշակույթը իբրև հոմոոլորտի ու նոոոլորտի հիմք

Այս ենթագլխի հիմնական դրույթն է՝ մշակույթն ու մշակութային գործիչները միակ միջոցն են հոմոոլորտը և նոոոլորտը կերտելու համար: Դրույթը բխում է այն նախադրյալից, որ մարդը կենսասոցիալական էակ է, այսինքն՝ մարդը ոչ միայն կենսաբանական էակ է, այլ նաև սոցիալական (**Zoon Politikon**, Արիստոտել): Նա ձերբազատվում է իր կենդանական էությունից (կենսոլորտի մաս լինելուց) նշանների միջոցով (animal symbolicum)[3], ինչի հիման վրա էլ ձևավորվում են այլ նշանային համակարգերը (կրոն, գրականություն և այլն)[4]:

---

1 Քանի որ ինֆոոլորտի նկագրությունը մեր նպատակադրումից դուրս է և մերօրյա գերխնդիր է, ապա մեր ընթերցողը այս խնդրի մասին կարող է հանգամանալից ծանոթանալ Դուգլաս Ռաշկոֆֆի գրքում՝ **Рашкофф**, Д. Медиавирус. Как поп-культура тайно воздействует на ваше сознание (гл. Характер заражения , Инфосфера), М., изд. Ультра.Культура, 2003 // http://www.gumer.info/bibliotek_Buks/Gurn/Rashk/index.php - 10.07.2011.

2 **Рашкофф**, Д. Медиавирус. Как поп-культура тайно воздействует на ваше сознание (гл. Характер заражения), с. 2, 7. // http://www.gumer.info/bibliotek_Buks/Gurn/Rashk/index.php - 10.07.2011.

3 Այս մասին մանրամասն տե՛ս **Кассирер**, Э., Опыт о человеке: введение в философию человеческой культуры, с. 3-30 // Проблема человека в западной философии (Сост. и послесл. П.С.Гуревича), М., изд. «Прогресс», С. 1988.

4 Այս խնդրին է նվիրված, օրինակ, Կաֆկայի «Հաշվետվությունը ակադեմիայի համար»

Վ. Իվանովն իր «Ինտելիգենցիան իբրև նոոոլորտ ուղեկցող» հոդվածում նոոոլորտի կերտող է համարում մտավորականությանը. «Ո՛չ Տերյար դե Շարդենը, ո՛չ Վերնադսկին չգիտեին՝ ինչպես է հնարավոր շարժումը դեպի նոոոլորտ և նրա հետագա հարստացումը: Բայց նրանք հասկանում էին, որ կարևոր էր ապահովել հասարակության շարժումը այդ ուղղությամբ: Այս խնդիրը կարող է իրագործել մտավորականությունը»[1]: Պոտենցիալում Վ. Իվանովի ասվածը հնարավոր կլինի, եթե մտավորականություն ասելով հասկանանք այն մարդկանց (քաղաքական գործիչներ, կրթյալ ու բանիմաց բարձրաստիճան զինվորականներ, ֆունդամենտալ գիտության ներկայացուցիչներ և այլն), *ովքեր մշակութային ու հոգևոր արժեքների կրող են*, սեփական անձ-կենսոլորտ, տեխնոլորտ, հասարակություն փոխհարաբերություններում առաջնորդվում են բացառապես *բարոյական սկզբունքներով*, արժեքներով (հումանիզմ, պարկեշտություն, հանդուրժողականություն և այլն):

Իսկ ինչպե՞ս է հնարավոր պոտենցիալում, որ մշակույթը հիմք դառնա նոոոլորտի կերտման համար: «Արվեստի և գեղագիտության սոցիոլոգիական կամ գործաբանական հայեցակարգը,- գրում է Վ. Վերնադսկին,- ածանցվում է նոոոլորտի գաղափարից: Դեռ ավելին, վերջինիս պահպանումը անհնար կլինի առանց արվեստի պահպանման և զարգացման: Չի կարող լինել հատվածային նոոոլորտ. այն գոյություն ունի իբրև մեկ ամբողջություն, որի յուրաքանչյուր մասը հարկավոր է այն շարունակելու համար: Այս իմաստով միայն ամբողջական կառուցվածքի ճշմարտացիության սկզբունքով է կիրառական նոոոլորտի զարգացման գործընթացն իբրև միասնություն (կամ նրա առանձին ժամանակային ենթաբաժինների)»[2]: Սկզբունքորեն Վ. Իվանովն իրավացի է: Բայց մենք ուզում ենք մի ճշգրտում անել: Բարոյական սկզբունքներ ունեցող աշխարհին հակադրված մենակ ինտելեկտուալ անհատը, ինչպիսին, օրինակ, պատկերված է Կարլ Շպիցվեգի (1805-1885) «Աղքատ պոետը» ("Der arme Poet", 1839) կտավի վրա[3], կարծում ենք՝ չի կարող կերտել հոմոոլոր-

---

պատմվածքը, որտեղ նկարագրվում է, թե ինչպես կապիկը դառնում է մարդ, որն իր հերթին պատմում է իր անցած ճանապարհը ակադեմիականներին: Այս պատմվածքի վերլուծության մասին տե՛ս օր.՝ Մակարյան Ա., Սիմյան Տ., Ֆրանց Կաֆկայի «Հաշվետվություն ակադեմիայի համար» պատմվածքը (վերլուծության փորձ) // Հայոց լեզու և գրականություն, Երևան, 2009, N 3-4, էջ 26-43:

1 Иванов, Вяч. Вс., Интеллигенция как проводник в ноосферу, с. 631 // Иванов, В. В., Избранные труды по семиотике и истории культуры, Т. IV, М., Языки славянских культур, 2007.

2 Иванов, Вяч. Вс., Эволюция ноосферы и художественное творчество, с. 32 // Ноосфера и художественное творчество, М., изд. «Наука», 1991.

3 Մենք գիտակցում ենք, որ այս կտավը «բաց» է մեկնաբանության առումով: Դժվար է ճշգրիտ կերպով ասել, թե այս պոետը աղքատ է, որովհետև անտաղանդ է, իր մտավոր գործունեությունը ոչ մեկի պետք չէ, թե նա հասարակությունից առաջ է, և իր ժամանակակիցները ի վիճակի չեն նրա գրածները հասկանալու, գնահատելու և՛ հոգևոր, և՛ նյութական առումով: Եթե այս վերջին մեկնաբանությունը ընդունելի է, ուրեմն նա մեծ

տը, նոոոլորտը: Վերջիններիս կերտման համար հարկավոր է «ինտելեկտուալը իբրև տեր» մոդելը (Զոլա, Սարտր, Բուրդյո)[1]: Ինտելեկտուալի նման տիպը, ենթադրում է, որ նա կենտրոնական դեր է ստանձնում հասարակության մեջ՝ հասարակական կյանքը վերափոխելու կամ հասարակության համար կարևոր հրատապ հարցերը հասարակական քննարկման նյութ դարձնելու համար, քանի որ նրա հեռահար նպատակը *հումանիզմի, բանականության սկզբունքների, առաջընթացի* ապահովումն ու տարածումն է. «Ճշմարտությունը, - գրում է Նիիլո Կաուպին, - ոչ թե կենտրոնում է, այլ՝ եզերքին, կողնակին: Ճշմարտությունը միշտ դեմ է քաղաքական իստեբլիշմենտին և թույլերի, հալածվածների, թշվառների կողմն է»[2]:

Նկատենք, որ 1920-30 թթ. Գերմանիայում մենք տեսնում ենք «ինտելեկտուալ-տեր» մոդելի մտավորականների, որոնք պայքարում էին հականացիստական տրամասույթի դեմ:

Նկատենք, որ արվեստի, մշակույթի զարգացումը պայմանավորված է քաղաքական վարչակարգի գործողություններով, կամքով, ցանկությամբ: Այս խնդրի առումով ուշագրավ է Պիեր Բուրդյոյի՝ Կարլ-Օտտո Մաուին տրված «Ինտելեկտուալ գործունեության դաշտը իբրև յուրօրինակ աշխարհ» խորագիրը կրող հարցազրույցում հնչեցված հետևյալ գաղափարը, որ «մշակութային արտադրության դաշտը ենթակա դիրք ունի քաղաքական դաշտի նկատմամբ: Հենց այս հիմնական փաստը անտեսվում է արվեստի ու գրականության սովորական տեսությունների կողմից»[3]: Այս պնդումը լիովին հիմնավորված է, քանի որ քաղաքական դաշտն է որոշում, թե ինչպիսի մշակութային քաղաքականություն պիտի իրականացվի: Ըստ այդմ էլ որոշվում է գրական դաշտը[4]:

ներդնում է անում հոմոոլորտի, և նոոոլորտի կերտման առումով:

1 Նկատենք, որ Բուրդյոն իր նախորդ-միայնակներից (Զոլա, Սարտր) տարբերվում է նրանով, որ նա «վերածվում է ինտելեկտուալ-մենեջերի, որը ղեկավարում է ոչ միայն գիտական կայսրություն, այլ նաև հրատարակչություն»: Այս մասին մանրամասն տե՛ս Кауппи, Ниило. Социолог как моралист: «практика теории» у Пьера Бурдье и французская интеллектуальная традиция // НЛО, 2000, N. 45 / http://magazines.russ.ru/nlo/2000/45/kauppi.html - 03.06.2011.

2 Кауппи, Ниило. Социолог как моралист: «практика теории» у Пьера Бурдье и французская интеллектуальная традиция // НЛО, 2000, N. 45 / http://magazines.russ.ru/nlo/2000/45/kauppi.html - 03.06.2011.

3 Бурдьё, Пьер. Поле интеллектуальной деятельности как особый мир (Интервью с Карлом-Отто May. *«Norddeutschen Rundfunk»*, Гамбург, декабрь 1985 г.) // Бурдьё П. Начала. Choses dites, М., изд. "Socio-Logos", 1994. 288 / http://bourdieu.name/content/pole-intellektualnoj-dejatelnosti-kak-osobyj-mir – 25.05..2011.

4 «Գրական դաշտ» ասելով Պ. Բուրդյեն նկատի ունի «դաշտի ուժերը և միաժամանակ պայքարի դաշտը, որոնք ուղղված են ուժերը փոխակերպելու կամ ուժերի տեղակայված հարաբերությունները պահպանելու համար: Դաշտի յուրաքանչյուր մասնակից (ագենտ) ներդնում է իր ուժը (կապիտալ), որը ձեռք է բերել նախորդ պայքարից» (Бурдьё, Пьер. Поле интеллектуальной деятельности как особый мир // Бурдьё П. Начала. Choses dites, М.,

Այս գաղափարը, ըստ էության, նորություն չէր: Պետությունն-մշակույթ, արվեստ կապին անդրադարձել է, օրինակ, ռոմանտիկ Վիլյամ Բլեյքը. «Արվեստները և գիտությունները, - գրում է նա, - ոչնչացվում են բռնակալների ու տխմար կառավարությունների կողմից: Ինչու՞ պետք է լավ կառավարությանը ձգտի ճնշել այն, ինչը նրա գլխավոր ու միակ աջակցողն է:

Արվեստն ու գիտությունը կայսրության հիմքում են: Քշե՛ք կամ ճնշե՛ք դրանց և կայսրությունը կդադարի գոյություն ունենալուց: Կայսրությունը հետևում է արվեստին և ոչ թե հակառակը, ինչպես մտածում են անգլիացիները»[1]: Վ. Բլեյքի դիտարկումները մինչ օրս էլ արդիական են, հիմնավորված, քանի որ մշակույթի, հոգևորի բացակայությունը զոմբիացնում է հասարակությունները: Իսկ նման հասարակություններում, պետություններում նյութական շահը, փողը հռչակվում է իբրև գերագույն արժեք (հիմնականում՝ թաքնված կերպով)[2]: Եզրակացությունն այն է, որ այդպիսի հասարակություններում չի կարող լինել ազատ, բաց, անկաշկանդ գրական դաշտ: «Մշակութային դաշտերի արտադրության ինքնավարությունը,- ասում է Բուրդյոն,- կառուցվածքային գործոն է, որը թելադրում է դաշտում ներքին պայքարի ձևը»[3]: Ճիշտ նույն կերպ 1933 թ. հետո նացիստները սահմանափակեցին գրական դաշտերի ինքնավարությունը և դարասկզբին ձևավորված բազմաձայն գրական դաշտը «սպանեցին»:

Այսպիսով, կենսոլորտի մինչև նոոլորտ «ճանապարհը» խիստ կարևոր է քաղաքական համակարգերն ու մշակութային առանձնահատկությունները նկարագրելու, նրանցում տեղ գտած ախտանշանները վեր հանելու առումով: Նման խնդիրներ քննարկելիս հրատապ է դառնում նաև մտավորականության դերը, մտավորականի «ինտելեկտուալ-տեր» տիպի անհրաժեշտությունը՝ հիվանդ հասարակությունները, վարչակարգերը բուժելու համար:

изд. «Socio-Logos", 1994. / http://bourdieu.name/content/pole-intellektualnoj-dejatelnosti-kak-osobyj-mir – 25.05..2011)

1 Блейк, Вильям. Из аннотации к «Рассуждениям» сэра Д. Рейнолдса, с . 259 // Литературные манифесты западноевропейских романтиков (Под ред. А.С. Дмитриева), М., Изд-во Моск. ун-та, 1980.

2 Նկատենք, որ Բլեյքի այս միտքը մինչ օրս էլ մնում է հրատապ ու արդիական:

3 Бурдье, Пьер. Поле интеллектуальной деятельности как особый мир (Интервью с Карлом-Отто May. Гамбург, декабрь 1985 г.) // http://novruslit.ru/library/?p=58 – 25.05..2011.